ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- **Արմավիրի մարզպետի տեղակալ՝** **Բարսեղ Նիկողոսյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝** **Արամ Հովհաննիսյան**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Երվանդ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Մանվել Մելիքյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Նարեկ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության**
  - **փաստաթղթաշրջանառության բաժնի պետ՝** **Աննա Միքայելյանի**
  - **հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝** **Տաթևիկ Մկրտչյանի**

Քննարկվեց՝

26.05.2025թ. կայացած գործակարգավարական խորհրդակցության ընթացքում ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքը և մարզում առկա այլ հրատապ խնդիրներ:

1.1 ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից անշարժ գույքի հանձնման ուղղությամբ տարված աշխատանքների և արդյունքների վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի

քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանը ներկայացրեց հետևյալ տեղեկատվությունը՝

ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից անշարժ գույքի հանձնման գործընթացի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին չհանձնված թվով 7 դպրոցների հանձնման կապակցությամբ կատարվում է ամենօրյա աշխատանք /փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություն դպրոց, քննարկումներ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակիցների հետ/ և արդյունքների մասին կազմվել է տեղեկանք, որը ներկայացվում է աղյուսակի տեսքով:

	Անշարժ գույքի անվանումը	**Անշարժ գույքի հասցեն**	**Պետական գույքի կառավարման կոմիտեին չհանձնելու պատճառները**	**Անշարժ գույքի հետ կապված խնդիրների լուծման վերաբերյալ տարվող աշխատանքները**
1	«Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Շահումյան 20	Դպրոցի տարածքում առկա է շինություն, որը ներկա պահին չի տնօրինվում դպրոցի կողմից	Քննարկվել է Պետական գույքի կառավարման կոմիտեում, խնդրի կարգավորման ուղղությամբ սեղմ ժամկետում կառաջարկվի լուծման տարբերակ:
2	«Արմավիրի N 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Աբովյան 182	Դպրոցի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականնում առկա են հողամասի և շինությունների վերաբերյալ անհամապատասխանություններ	**Փաստաթղթերը գրությամբ ներկայացվել են Պետական գույքի կառավարման կոմիտե:**
3	«Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ,Արմավիր համայնք, գ. Հացիկ 1-ին փ., 26շ.	Դպրոցի տարածքում առկա են շինություններ, որը ներկա պահին չի տնօրինվում դպրոցի կողմից	Քննարկվել է Պետական գույքի կառավարման կոմիտեում, խնդրի կարգավորման ուղղությամբ առաջարկվել է տարբերակ, որը գտնվում է ուսումնասիրության փուլում:

4	«Լեռնամերձի հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ, Խոյ խոշորացված համայնք գ. Լեռնամերձ Արագածի 26	Տարածքում առկա է ինքնակամ շինություն	Կատարվել է չափագրում, կներկայացվի ինքնակամ շինության օրինականացման:
5	«Վարդանաշենի Մ.Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ գ.Վարդանաշեն 1-ին փողոց,24 շենք	Կատարվել է նոր չափագրություն,որից հետո իրականացվելու է սեփականության իրավունքի գրանցման գործընթաց	**Փաստաթղթերը գրությամբ ներկայացվել են Պետական գույքի կառավարման կոմիտե:**
6	Արգինայի միջնակարգ դպրոց	Գ. Արգինա, Աբովյան 40	Բացակայում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը:	**Հանձնվել է Պետական գույքի կառավարման կոմիտեին:**
7	Գեղակերտի միջնակարգ դպրոց	ՀՀ Արմավիրի մարզ Խոյ համայնք Գեղակերտ բնակավայր Մ.Մաշտոցի 22	Հարակից շինությունների սեփականատերերի կողմից որոշակի տարածքի զավթում,ինքնակամ շինությունների կառուցում	Կատարվում է ինքնակամ շինությունների քանդման աշխատանքներ: Ճշտվում են հարևանությամբ գտնվող գույքի և դպրոցի սահմանագիծը:

1.2 Սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ զեկույցը Դավիթ Ավետիսյանը ներկայացրեց հետևյալ աղյուսակի տեսքով՝

Արմավիր համայնք

2022-2024թթ. սուբվենցիայի ծրագրեր - ընթացքի մեջ, ավարտական փուլում գտնվող -11

h/h	*Համայնքը*	*Ենթածրագիրը*	*Սուբվենցիայի տարեթիվը*	*Կատարված աշխատանքների 02. 05.2025թ. դրությամբ*	*Պայմանագրի կնքման ամսաթիվը և ժամկետը*	*Համաձայնագրի կնքման ամսաթիվը*	*Վերջնաժամկետը*

1	Արմավիր	Արմավիր քաղաքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգում	2022թ. սուբվենցիա	100% -ավարտված (2024թ.), լրացուցիչ աշխատանքներ՝ ընթացքի մեջ, 2025թ. տեղափոխվող /ֆինանս. /	28.10.2022թ., 392 օրացուց. օր	24. 11. 2023թ. , համաձայնագրով՝ 01. 11. 2024թ.	ժամկետի երկարաձգման համաձայնագիր չի կնքվելու
2	Արմավիր	Խանջյան գյուղի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում	2023թ. սուբվենցիա	90% -ավարտական փուլ	26. 09. 2023թ. , 365 օր		15. 11. 2025թ.
3	Արմավիր	Արմավիր քաղաքի թիվ 2 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գույքի և սարքավորումների ձեռքբերում	2023թ. սուբվենցիա	80%			
4	Արմավիր	Արաքս գյուղի խմելու ջրամատակարարման ցանցերի վերակառուցում	2024թ. սուբվենցիա	95%-ավարտական փուլ	31.07.2024թ. , 150 օրացուց. օր		15. 11. 2025թ.
5	Արմավիր	Արաքս գյուղից Սարդարապատ գյուղ տանող ճանապարհի երկայնքով ջրագծի կառուցում	2024թ. սուբվենցիա	90%-ավարտական փուլ	16.07.2024թ. 150 օրացուց. օր		ժամկետի երկարաձգման համաձայնագիր է պետք
6	Արմավիր	Արմավիր քաղաքի թիվ 11 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում	2024թ. սուբվենցիա	30%	31. 07. 2024թ. , 365 օրացուց. օր		31. 07. 2025թ. (ըստ պայմանագրի ամսաթվի)
7	Արմավիր	Արմավիր քաղաքի Ս.Նովա փողոցի Արարատյան–Ջիվանի հատվածի հիմնանորոգում	2024թ. սուբվենցիա	90%-ավարտական փուլ	30.08.2024թ., 150 օրացուց. օր		ժամկետի մեջ է
8	Արմավիր	Արմավիր քաղաքի Ե. Չարենց փողոցի Շահումյան-Աբովյան հատվածի հիմնանորոգում	2024թ. սուբվենցիա	95%-ավարտական փուլ	30.08.2024թ. , 150 օրացուց. օր		ավարտվել է ժամկետի մեջ
9	Արմավիր	Արմավիր քաղաքի Ջիվանի- Ե.Չարենց փողոցների միջև ընկած օղակաձև հատվածի հիմանորոգում	2024թ. սուբվենցիա	65%	30.08.2024թ., 120 օրացուց. օր		ավարտվել է ժամկետի մեջ
10	Արմավիր	Մյասնիկյան գյուղի Բաղրամյան փողոցի 3+20-1+067 հատվածի կառուցում	2024թ. սուբվենցիա	95% -ավարտական փուլ	05.09.2024թ., 120 օրացուց. օր		ժամկետի երկարաձգման համաձայնագիր է

							պետք
11	Արմավիր	Արմավիր քաղաքի թիվ 6 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի նոր շենքի կառուցում	2024թ. սուբվենցիա	4%			աշխ. սկս վել են 2025թ.

Մեծամոր համայնք

2022-2024թթ. սուբվենցիայի ծրագրեր - ընթացքի մեջ, ավարտական փուլում գտնվող - 13

h/h	*Համայնքը*	*Ենթածրագիրը*	*Սուբվենցիայի տարեթիվը*	*Կատարված աշխատանքների 02. 05.2025թ. դրությամբ*	*Պայմանագրի կնքման ամսաթիվը և ժամկետը*	*Համաձայնագրի կնքման ամսաթիվը*	*Վերջնաժամկետը*
1	Մեծամոր	Մեծամորի համայնքի ք. Մեծամորի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ	2022թ. սուբվենցիա	80% - աշխատանքներ չեն իրականացվում	30.12.2022թ.		պայման ագիրը լուծարվել է

2	Մեծամոր	Մեծամոր համայնքի ք. Մեծամորի թիվ 3 մանկապարտեզի հիմնանորոգման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ	2022թ. սուբվենցիա	98% -ավարտական փուլ	30.11.2022թ.		31. 08. 2024թ. , պետք է կնքեն համաձայնագիր /սակայն տնօրինությունը չի կարող ստորագրել/
3	Մեծամոր	Շենավան բնակավայրի մանկապարտեզի կառուցում և հարակից տարածքի բարեկարգում	2023թ. սուբվենցիա	12%	15. 02. 2024թ. , 730 օր		15. 02. 2026թ. (ըստ պայմանագրի ամսաթվի)
4	Մեծամոր	Նորապատ բնակավայրի 2-րդ և 9-րդ փողոցների կոյուղու կառուցում	2024թ. սուբվենցիա	.45%-աշխատանքներն դադարեցվել են	02. 04. 2024թ. 80 օրացուց. օր		պայմանագիրը խզվել է
5	Մեծամոր	Մեծամոր քաղաքի թիվ 3 մանկապարտեզի շենքի հարակից տարածքի բարեկարգում	2024թ. սուբվենցիա	83%	12.08.2024թ. , 100 օրացուց. օր, համաձայնագիր՝ 03. 10. 2024թ.	13. 01. 2025թ.	ժամկետի երկարաձգման համաձայնագիր է պետք
6	Մեծամոր	Տանձուտ բնակավայրի մանկապարտեզի շենքի հարակից տարածքի բարեկարգում	2024թ. սուբվենցիա	90% -ավարտական փուլ	13.08.2024թ., 90 օրացուց. օր	06. 09. 2024թ.	21. 04. 2025թ.
7	Մեծամոր	գյուղ Ալաշկերտ 4-րդ, 21-րդ, 24-րդ, 25-րդ, 10-րդ, 26-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ փողոցների և 22-րդ փողոցի 2-րդ նրբանցքի գազաֆիկացում	2024թ. սուբվենցիա	65%	19.09.2024թ., 130 օրացուց. օր, համաձայնագիրը՝ 14. 03. 2025թ-ից		28. 07. 2025թ.
8	Մեծամոր	գյուղ Ակնալիճ Մ.Մաշտոցի փողոցի գազաֆիկացում	2024թ. սուբվենցիա	65%	19.09.2024թ., 130 օրացուց. օր		ժամկետի երկարաձգման համաձայնագիր է պետք
9	Մեծամոր	Երասխահուն գյուղի 8-րդ փողոցի գազաֆիկացում	2024թ. սուբվենցիա	98%-ավարտական փուլ	19.09.2024թ., 130 օրացուց. օր, համաձայնագիրը՝ 01.03. 2025թ-ից		10. 07. 2025թ.

10	Մեծամոր	գյուղ Ջանֆիդա 1-ին, 9-րդ, 22-րդ, 6-րդ, 7-րդ, 16-րդ, 14-րդ, 13-րդ, 4-րդ, դարպասներ տանող ճանապարհի և հին հիվանդանոցի փողոցների գազաֆիկացում	2024թ. սուբվենցիա	60%	06.09.2024թ., 120 օրացուց. օր, համաձայնագիրը՝ 27.12. 2024թ-ից	27. 04. 2025թ.	ժամկետի երկարաձգման համաձայնագիր է պետք
11	Մեծամոր	Բերքաշատ բնակավայրի «Բերքաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տանող հատվածում գազատարի կառուցում	2024թ. սուբվենցիա	85%	06.09.2024թ., 60 օրացուց. օր		ժամկետի երկարաձգման համաձայնագիր է պետք
12	Մեծամոր	Մեծամոր քաղաքի 1-ին թաղամասի 40 շենքի 830քմ մակերեսի վերանորոգում	2024թ. սուբվենցիա	ավարտական փուլ	30.10.2024թ., 70 օրացուց. օր, համաձայնագիր N1, կնքված 27. 11. 2024 թ.	06. 02. 2025թ.	ժամկետի երկարաձգման համաձայնագիր է պետք
13	Մեծամոր	Մեծամոր քաղաքի համայնքապետարանի շենքի հարակից տարածքի բարեկարգում	2024թ. սուբվենցիա	5%	03.02.2025թ., 220 օրացուց. օր, համաձայնագիր1՝ 28.02.2025թ.		08. 10.2025թ.

Վաղարշապատ համայնք

2022-2024թթ. սուբվենցիայի ծրագրեր - ընթացքի մեջ, ավարտական փուլում գտնվող -3

h/h	*Համայնքը*	*Ենթածրագիրը*	*Սուբվենցիայի տարեթիվը*	*Կատարված աշխատանքների 02. 05.2025թ. դրությամբ*	*Պայմանագրի կնքման ամսաթիվը և ժամկետը*	*Համաձայնագրի կնքման ամսաթիվը*	*Վերջնաժամկետը*
1	Վաղարշապատ	Էջմիածին քաղաքի թիվ 14 «Ձնծաղիկ» մանկապարտեզի հիմնանորոգում	2022թ. սուբվենցիա	100% -ավարտված (2024թ.) հիմն. աշխատանքներ ի մասով, իսկ լրացուցիչ աշխատանքներն ավարտվել են մինչև տարեվերջ, լրացուցիչի ֆինանսավորումը՝ 2025թ.	31.10.2022թ.	6 ամիս, 02. 06. 2023թ. , երկարաձգում՝ 18. 09. 2023թ. , 01. 09. 2024թ. , 01. 10. 2024թ.	15.11.2025թ.

2	Վաղարշապատ	Էջմիածին քաղաքի թիվ 6 «Արևիկ» մանկապարտեզի հիմնանորոգում և նոր մասնաշենքի կառուցում	2023թ. սուբվենցիա	53%	18. 08. 2023թ.	11. 08. 2024թ. , երկարաձգում՝ 01.11.2024թ.	15.11.2025թ.
3	Վաղարշապատ	Էջմիածին բնակավայրի Արամ Մանուկյան 1-ին թաղամասի 3 փողոցների հիմնանորոգում և Վահան Տերյան և Սուրբ Մ. Խորենացի փողոցների և Չարենց թաղամասի բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի և բակային ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգում	2024թ. սուբվենցիա	20%	09.10.2024թ., 250 օրացուց. օր		30.08.2025թ.

Խոյ համայնք

2022-2024թթ. սուբվենցիայի ծրագրեր - ընթացքի մեջ, ավարտական փուլում գտնվող - 10

h/h	*Համայնքը*	*Ենթածրագիրը*	*Սուբվենցիայի փարեթիվը*	*Կատարված աշխատանքների 02. 05.2025թ. դրությամբ*	*Պայմանագրի կնքման ամսաթիվը և ժամկետը*	*Համաձայնագրի կնքման ամսաթիվը*	*Վերջնաժամկետը*
1	Խոյ	Գեղակերտ գյուղում Մ.Սարյան, Մարշալ Բաղրամյան փողոցների և Մ.Մարշալ Բաղրամյան փողոցից մինչև մշակույթի տան հարակից տարածքի ասֆալտապատում	2022թ. սուբվենցիա	80%	16.09.2022թ.		25.12.2025թ.
2	Խոյ	Խոյ համայնքի խորքային հորերի հիմնանորոգում (Մրգաստան N-1)	2022թ. սուբվենցիա	70% -մնացել է հոսանքի միացումը	01.08.2022թ.		30.12.2025թ.
3	Խոյ	Մոնթեավան բնակավայրի հուշարձան-պուրակի կառուցում	2022թ. սուբվենցիա	80%	19. 09. 2022 թ.		30.12.2025թ.

4	Խոյ	Հայթաղ գյուղի մանկապարտեզի վերակառուցում և ձախ կողաճակատին կիպ միահարկ կցակառույց շինության իրականացում	2022թ. սուբվենցիա	100% -ավարտված, հիմնական և լրացուցիչ աշխատանքների մասով՝ (2024թ.), լրացուցիչի ֆինանսավորումը՝ 2025թ.	10.10.2022թ.		30. 12. 2 025թ.
5	Խոյ	Արշալույս բնակավայրի 19 փողոցի կապիտալ վերանորոգման, ասֆալտապատման աշխատանքներ	2023թ. սուբվենցիա	30%	11.10.2023թ.		26.12.202 5թ.
6	Խոյ	Մրգաստան բնակավայրի եկեղեցի տանող ճանապարհի կապիտալ վերանորոգում՝ սալարկում	2023թ. սուբվենցիա	30%	12. 08. 2024թ .		25.12.202 5թ.
7	Խոյ	Ամբերդ բնակավայրի ներտնտեսային ոռոգման ջրագծերի վերակառուցում	2023թ. սուբվենցիա	95% ավարտական փուլ	27.11.2023թ.		25.12.202 5թ.
8	Խոյ	Ծաղկունք բնակավայրի ներտնտեսային ոռոգման ջրագծերի վերակառուցում	2023թ. սուբվենցիա	40%	28.08.2023թ.		25.12.202 5թ.
9	Խոյ	Դաշտ բնակավայրի Բարեկամություն և Համերաշխություն փողոցների գազաֆիկացում	2023թ. սուբվենցիա	5%	16.11.2023թ.		25.12.202 5թ.
10	Խոյ	Աղավնատուն բնակավայրի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում	2023թ. սուբվենցիա	40%	05.08.2024թ.	25. 12. 202 5թ.	25. 12. 20 25թ.

Արաքս համայնք

2022-2024թթ. սուբվենցիայի ծրագրեր - ընթացքի մեջ, ավարտական փուլում գտնվող - 7

h/h	*Համայնքը*	*Ենթածրագիրը*	*Սուբվենցիայի տարեթիվը*	*Կատարված աշխատանքների 02. 05.2025թ. դրությամբ*	*Պայմանագրի կնքման ամսաթիվը և ժամկետը*	*Համաձայնագրի կնքման ամսաթիվը*	*Վերջնաժամկետը*
1	Արաքս	Արաքս համայնքի Արաքս և Մեծամոր բնակավայրերը սնուցող գազատար խողովակի կառուցման, Արաքս բնակավայրի Դեմիրճյան և Դրոյի փողոցների, Մեծամոր բնակավայրի Սարյան և Աբովյան փողոցների գազաֆիկացում	2023թ. սուբվենցիա	87%	22. 01. 2024թ. , 8ամիս,	05. 03. 2025թ. , երկարաձգում՝ 15.11.2025թ.	15.11.2025թ.
2	Արաքս	Հայկաշեն գյուղի մշակույթի տան վերանորոգում	2023թ. սուբվենցիա	67%	07. 09. 2023թ. , 4ամիս		07. 09. 2025թ
3	Արաքս	Ջրառատ գյուղի փողոցների լուսավորության անցկացման աշխատանքներ	2024թ. սուբվենցիա	30%	21.10.2024թ. , 112 օրացուց. օր		15.11.2025թ.
4	Արաքս	Գայ գյուղի ջրահեռացման համակարգի վերակառուցում	2024թ. սուբվենցիա	ընթացքի մեջ՝ 20%	11.11.2024թ., 3 ամիս		15. 11. 2025թ.
5	Արաքս	Ապագա գյուղի 700մ երկարությամբ 7-րդ, 15-րդ փողոցների ասֆալտապատման աշխատանքներ	2024թ. սուբվենցիա	95%-ավարտական փուլ	18.10.2024թ. , 98 օրացուց. օր		18.04.2025թ.
6	Արաքս	Արաքս գյուղի ջրահեռացման համակարգերի վերակառուցում	2024թ. սուբվենցիա	70%	22.11.2024թ., 3 ամիս		ժամկետի երկարաձգման համաձայնագիր է պետք
7	Արաքս	Առատաշեն գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի սալարկում	2024թ. սուբվենցիա	70%	13.12.2024թ. , 90 օր		ժամկետի երկարաձգման համաձայնագիր է պետք

2022-2024թթ. սուբվենցիայի ծրագրեր - ընթացքի մեջ, ավարտական փուլում գտնվող -3

h/h	Համայնքը	Ենթածրագիրը	Սուբվենցիայի տարեթիվը	Կատարված աշխատանքների 02. 05.2025թ. դրությամբ	Պայմանագրի կնքման ամսաթիվը և ժամկետը	Համաձայնագրի կնքման ամսաթիվը	Վերջնաժամկետը
1	Փարաքար	Փարաքար բնակավայրի Վ.Սարգսյան 1-ին և 2-րդ փողոցների ասֆալտապատում	2024թ. սուբվենցիա	20%	29.01.2025թ. , 120 օրացուց. օր		29. 05. 2025թ. (ըստ պայմանագրի ամսաթվի)
2	Փարաքար	Բաղրամյան բնակավայրի Կոմիտասի փողոցների ասֆալտապատում	2024թ. սուբվենցիա	Ավարտական փուլ	29.10.2024թ. , 120 օրացուց. օր, 26. 12. 2024 թ. N1 համաձայնագիր	26. 04. 2025թ.	ժամկետի երկարաձգման համաձայնագիր է պետք
3	Փարաքար	Նորակերտ բնակավայրի Կոմիտասի փողոցի ասֆալտապատում	2024թ. սուբվենցիա	Ավարտական փուլ	29.10.2024թ. , 120 օրացուց. օր, 26. 12. 2024 թ. N1 համաձայնագիր	26. 04. 2025թ.	ժամկետի երկարաձգման համաձայնագիր է պետք

1.3 Դավիթ Ավետիսյանը ներկայացրեց նաև թե ինչ փուլում են գտնվում Էջմիածին ԲԿ-ի վերակառուցման հետ կապված հարցերը: Նա նշեց, որ Էջմիածնի ԲԿ-ի վերակառուցման հետ կապված կատարվել է քննարկում Քաղաքաշինության կոմիտեի համապատասխան մասնագետի հետ: Քաղաքաշինության կոմիտե է ներկայացվել նախագիծ, որը ուսումնասիրվել է, հայտնաբերվել են թերություններ և նախագիծը ուղարկվել է լրամշակման:

2. 2025թ. հունիսի 10–ին կայանալիք մարզի խորհրդի նիստի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանը զեկուցեց՝ որ մարզի խորհրդի հունիսի 10-ին կայանալիք նիստի օրակարգի, անցկացման վայրի, օրվա, ժամի մասին պատշաճ ծանուցվել են մարզի խորհրդի անդամները և նիստին հրավիրվող անձինք: Մարզի խորհրդի նիստի օրակարգում հարցեր ընդգրկելու համար առաջարկություն է ներկայացվել համայնքների ղեկավարներին, սակայն նրանց կողմից հարցեր չեն ներկայացվել: Այնուհետև սահմանված կարգով ու

ժամկետում քննարկվել և կազմվել է մարզի խորհրդի նիստի օրակարգի նախագծի վերջնական տարբերակը և այն սահմանված կարգով ու ժամկետում ներկայացվել է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին, միաժամանակ տեղեկացնելով նիստի անցկացման վայրի, օրվա և ժամի վերաբերյալ: Մարզի խորհրդի նիստի օրակարգի նախագիծը սահմանված կարգով հրապարակվել է մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում:

3. «Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ»–ում իրականացվելիք «Արյունատվության գործընթացի» վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ասթինե Ապիտոնյանը զեկուցեց՝

Հունիսի 14-ը ամբողջ աշխարհում նշվում է որպես արյան դոնորի միջազգային օր, Հայաստանը ևս ամեն տարի միանում է այս արշավին և Արյունաբանական կենտրոնը՝ հանդիսանալով հանրապետությունում արյան պաշարների հավաքագրման և պահեստավորման լիազոր մարմին պլանավորում է օրվան նվիրված միջոցառումներ, որի առնչությամբ Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի » ԲԿ–ից ստացվել է գրություն արշավին միանալու առաջարկությամբ:

Միաժամանակ հակիրճ ներկայացվեց թե ովքեր կարող են հանդիսանալ արյան դոնոր.

Արյան դոնոր կարող են հանդիսանալ 18 տարին լրացած չափահաս, առողջ անձիք

- արյունատվության օրը չպետք է օգտագործեք յուղոտ, տապակած, կծու, ապխտած կերակուր, կարելի է ընդունել միայն թեյ կամ սուրճ,
- արյունատվությունից 24 ժամ առաջ չպետք է օգտագործեք ոգելից խմիչքներ,
- Ձեր ընտրած արյան կետը ներկայանաք անձնագրով և/կամ զինվորական գրքույկով/:

Դոնորը լրացնում է հարցաթերթիկը, որում նշում է իր առողջական վիճակի և ապրելակերպի մասին, որից հետո անցնում է լաբորատոր հետազոտություն և զննվում է թերապևտի կողմից:

Արյունատվությունից հետո անհրաժեշտ է.

- 10-15 րոպե մնալ հանգիստ պառկած վիճակում,
- վիրակապը պահել 1.5-2 ժամ,
- այդ օրը չզբաղվել ծանր ֆիզիկական աշխատանքով,
- չօգտագործել ոգելից խմիչք,
- լավ սնվել և խմել շատ հեղուկ:

Խորհրդատվության ավարտին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանի կողմից ներկայացվեց ընդհանուր տեղեկատվություն այն դատական գործերի վերաբերյալ, որոնցով մարզպետի աշխատակազմը հանդես է եկել որպես պատասխանող կողմ:

ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից Լիաննա Հարությունյանին տրվեց հանձնարարական՝ հաջորդ գործակարգավարական խորհրդատվությանը հանդես գալ զեկույցով՝ վերոնշյալ դատական գործերի վերաբերյալ:

Ամփոփելով քննարկումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

2025-06-16 14:48:24 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության
բաժնի պետ՝ Աննա Միքայելյան